ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

«Բիգլ» նավով կատարած իր ճանապարհորդությունների ժամանակ Չարլզ Դարվինը հաճախ կանգ էր առնում երկրագնդի տարբեր վայրերում և ուսումնասիրություններ կատարում: Մի անգամ մեծ բարձրության վրա, դադարի ժամանակ Դարվինի ուղեկիցները զարմանքով նկատեցին, որ թեև խարույկի վրա կաթսայում ջուրը արդեն բավականին ժամանակ է ինչ եռում է, բայց կարտոֆիլը չի եփվում, մնում է հում: Խնդիրը նրանում էր, որ ջրի եռման ջերմաստիճանը ուղիղ կապի մեջ է մթնոլորտային ճնշման հետ: Լեռնային մեծ բարձրություններում մթնոլորտային ճնշումը ցածր է, ուստի ջուրը կարող է եռալ ավելի ցածր ջերմաստիճանում քան անհրաժեշտ է կարտոֆիլի եփման համար: